


ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՏԱՓԱՋԱՐԻ ԵՒ ՄՕՏԱԿԱՅ ՀԱՅԱՔՆԱԿ ԵՐԵՔ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԱՍԻՆ (1871)

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ (mihran.min@gmail.com)

ՄՈՒՏՔ

Յետագայ էջերով հրատարակութեան կու տանք Ատափազար քաղաքի ու անոր մօտակայ հայաբնակ Թամլիխ, Նոր գիւղ եւ Ֆերիզլի գիւղերու մասին 1871ին պատրաստուած պատմական տեղեկագիր մը, որուն առաջին մասը կը ներկայացնէ Ատափազարի հայաբնակ չորս թաղերը՝ Ս. Հրեշտակապետաց, Ս. Կարապետ, Ս. Լուսաւորիչ եւ Ս. Ստեփանոս, անջատաբար եւ կը խօսի իւրաքանչիւրի եկեղեցիին, քահանաներուն, արական եւ իգական դպրոցներուն, ուսուցիչներուն, ինչպէս նաեւ դպրոցներուն եւ եկեղեցիներուն նիւթական վիճակին մասին: Տեղեկագիրին երկրորդ բաժինը կ'անդրադառնայ Ատափազարի մօտակայ երեք հայաբնակ գիւղերուն՝ Թամլիխին, Նոր Գիւղին ու Ֆերիզլիին եւ ասոնց պարագային եւս կու տայ մանրամասնութիւններ՝ իւրաքանչիւրի եկեղեցիին, քահանային, դպրոցին, ուսուցիչին, հայութեան թուաքանակին, գիւղացիներու տնտեսական վիճակին եւ այլ կարեւոր նիւթերու մասին:



Հրատարակուող փաստաթուղթի կարեւոր տեղեկութիւններէն մէկը Օսմանեան Կայսրութիւն նոր թափանցած չերքէզ գաղթականներու կողմէ Թամլիխ գիւղէն մօտ 300 եւ Նոր Գիւղէն մօտ 200 արտավար հողերու գրաւման փաստն է, որոնց մասին գիւղացիներու բողոքները կառավարութեան կողմէ մնացած են «անլսելի», մինչ մօտակայ Սինան Օղլու գիւղի թուրքերը, իրենց կարգին, գրաւած էին Ֆերիզլիի մօտակայ ճանապարհ-

ները, գրկելով ֆերիզիցիները իրենց հողերուն հասնելու եւ զանոնք մշակելու կարելիութենէն:

Եթէ այս էր մայրաքաղաքին աշխարհագրականօրէն այնքան մօտիկ Ատափազարի հայաբնակ գիւղերու կացութիւնը, ապա պիտի ենթադրէի, թէ ի՞նչ վիճակ կը տիրէր ներքին գաւառներուն ու մանաւանդ՝ Արեւմտեան Հայաստանի գիւղական շրջաններուն մէջ...

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՏԱՓԱԶԱՐԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ատափազարը հայաբնակ քաղաք մըն էր Նիկոմիդիա գաւառին մէջ եւ կեդրոնը՝ համանուն գաւառակին: Ծանօթ էր նաեւ «Աստուածարեալ քաղաք» պատուանունով: Կը գտնուի Նիկոմիդիա քաղաքի արեւելքը, անկէ 45 քլմ. հեռավորութեան վրայ, արգասաբեր դաշտի մը մէջ:

Շրջանի բնակչութեան եկամուտի գլխաւոր աղբիւրը շերամապահութիւնն ու գիւղատնտեսութիւնն էր:

Ատափազարը Բիւթանիոյ շրջանի ամենահայաշատ քաղաքն էր: Ըստ բանասէր Մինաս Գասապեանի (Ֆարիատ, աւելի ետք՝ Մինաս Վերաժին) պատրաստած մարդահամարին, քաղաքը 1909-10ին ունեցած է 12,030 հայ առաքելական, 420 հայ բողոքական եւ 13 շաբաթական կամ գալստեան հայեր¹: Ըստ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի 1913ի սկզբնաւորութեան կազմած գաւառի հայութեան ընդհանուր մարդահամարին՝ Ատափազարի չորս հայաբնակ թաղերը միասնաբար ունեցած են 2416 տուն, 11,858 հայ առաքելական բնակիչ²:

Քաղաքի առաքելական հայերը ունեցած են 6 եկեղեցի. մանչերու հինգ եւ աղջկանց չորս ազգային վարժարանները 1909-10 եւ 1911 կրթաշրջաններուն միասնաբար ունեցած են 810 աշակերտ եւ 761 աշակերտուի, իսկ 1909ին հիմնուած Ազգ. կեդրոնական վարժարանը՝ 130 ուսանող, ազգային երեք մանկապարտէզները 1909-10 կրթաշրջանին միասնաբար ունեցած են 450 երկսեռ աշակերտ, «Մանիշակ» սեփական մանկապարտէզը՝ 120 երկսեռ աշակերտ: Նոյն թուականներուն, քաղաքի բողոքական դեպրոցը ունեցած է 40 աշակերտ եւ 60 աշակերտուի³: Հոն գործած է նաեւ հանրաժանօթ ամերիկեան «Հայուհեաց բարձրագոյն վարժարան»ը, որուն ուսանողուիներուն մէջ մեծ էր տեղացի հայուիներուն թիւը:

Զինադադարին (1918), վերապրող ատափազարցիներուն մէկ մասը վերադարձած է ծննդավայր, բայց աւելի ետք, քեմալական շարժման ուժեղացումով, 1921ին անոնք կրկին հեռացած են հայրենի քաղաքէն:

¹ Մինաս Գ. Գասապեան (Ֆարիատ), *Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ*, Պարտիզակ-Կ. Պոլիս, տպ. «Ազատամարտ»ի, 1913, էջ 243:

² Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆոնտ 1388, ցուցակ 1, գործ 111, թերթ 1:

³ Գասապեան, էջ 259, 261-3:

Քաղաքի հայերը ունեցած են մշակութային հարուստ կեանք, բազմաթիւ թատերախումբեր, նուագախումբ, գրադարաններ, Բաբելի քան չորս տասնեակ մշակութային-բարեսիրական միութիւններ, հայերէն գիրքեր ու թերթեր, երկու տպարաններ եւն.:

Ատափազարի եկեղեցիներուն առնչութեամբ Բաբելի քաղաքը, հրատարակուող տեղեկագրի կազմութենէն ետք, 1906-07ին ունեցած է Ս. Յարութիւն նորակերտ եկեղեցին եւս, մինչ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի Մայիս 1915ին կազմած վիճակացոյցին մէջ, Ատափազարի եկեղեցիներու շարքին յիշատակուած է 1813ին կառուցուած Ս. Եղիա անունով եկեղեցի մը, որուն մասին որեւէ ակնարկութիւն չկայ հրատարակուող տեղեկագրին մէջ. կամ ա՛յն է, որ 1871ին գործող եկեղեցի չէր, ու Բաբելի ետք, վերանորոգուելով, 1915-ին (ու անկէ առաջ) դարձած է գործող եկեղեցի, եւ կամ ալ մատուց մըն էր, առանց ծխական ժողովորդի, ու այդ պատճառով նկատի չէ առնուած տեղեկագրին մէջ⁴: Զարմանալի է, որ Թէոդիկ եւս, Ատափազարի եկեղեցիներու ցանկը ներկայացուցած ժամանակ, չէ յիշած այս վերջին երկու եկեղեցիները⁵:

Ատափազարը ունի իր անցեալին նուիրուած մեծարժէք յուշամատեան մը՝ *Պարմագիրք Արափազար «Աստուածարեալ» քաղաքին*, խմբագրողներ՝ Արտաշէս Պիպերեան եւ Վարդան Եղիշէեան⁶, ուր հրատարակուող տեղեկագրի ընդգրկած ժամանակաշրջանի տեղեկութիւնները հազուագիւտ են, այնպէս որ այս տեղեկագիրը նոր լոյս կը սփռէ քաղաքի հայութեան անցեալին եւ Բաբելի լայն պատկերացում կու տայ անոր պատմութեան, մանաւանդ կրթական-եկեղեցական անցեալին մասին:

Հրատարակուող տեղեկագիրը յղուած է Ներսէս եպս. Վարժապետեանին (Բաբելի ետք՝ պատրիարք Կ. Պոլսոյ), որ 1871ին առաջնորդն էր Նիկոմիդիոյ թեմին, որուն ենթակայութեան տակ կը գտնուէր նաեւ Ատափազար գաւառակը: Նիկոմիդիոյ ազգային գաւառային երեսփոխանական ժողովը թեմի առաջնորդ ընտրած էր զինք 22 Փետրուար 1871ին, ու ինք Նիկոմիդիա հասած էր Ապրիլ 3ին⁷: Ըստ երեւոյթին, թեմին Բաբելի լաւ ծանօթանալու նպատակով, պաշտօնավարութեան սկզբնաւորութեան Ներսէս եպս. թելադրած է Ատափազարի ազգային մարմիններուն, որ պատրաստեն այս տեղեկագիրը, ինչ որ կատարուած է բաւական բարեխղճութեամբ:

⁴ ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 111, թ. 3:

⁵ Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին արդարաւի 1915 տարիին*, խմբ. Արայ Գալայճեան, St. Vartan Press հրատարակչութիւն, Նիւ Եորք, 1985, էջ 368:

⁶ Տպուած է Փարիզ, տպարան Տէր Յակոբեան, 1960, 752 էջ:

⁷ «Ազգային», *Մասիս լրագիր*, Կ. Պոլիս, 25 Փետր. 1871, էջ 27. նաեւ նոյն՝ 13 Մարտ 1871, էջ 2. նաեւ նոյն՝ 8 Ապրիլ 1871, էջ 2:

Հրատարակուող տեղեկագրին բնագիրը կը պահուի Երեւանի Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանին մէջ (ԳԱԹ), Թորոս Ազատեանի ֆոնտ, 37/VI: 9 էջանի ձեռագիր տետրակ մըն է, 22x27.5 սմ. ծաւալով: Զայն կը հրատարակենք նոյնութեամբ, առանց ուրեւէ փոփոխութեան: Աւելցուցած ենք միայն հարկ եղած ծանօթագրութիւնները:

* * *

[ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՏԱՓԱԶԱՐԻ ԵՒ ՄՕՏԱԿԱՅ ՀԱՅԱՐԵՆԱԿ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԱՍԻՆ]

Ըստ հրամանի գերապատիւ սրբազան առաջնորդ հօրդ, Ատափազար գիւղաքաղաքի չորս թաղերուն եւ շրջակայ երեք հայաբնակ գիւղօրէից եկեղեցեաց եւ վարժարանաց տեղեկագրութիւնը մանրամասն կերպիւ ի ներքոյ կ'նշանակեմք:

Աբ. Հրեշտակապետաց թաղ

Ունի

Մէկ եկեղեցի նորաշէն յանուն սրբոց Հրեշտակապետաց, կառուցեալ յամին 1864:

Վեց քահանայ՝ որք են.

Ա. Տ. Նիկողայոս (անդամալոյծ), ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղաւնի⁸ կոչեցելոյ, յամին 1826: Ամաց իբրեւ ութսունից:

Բ. Տ. Յովհաննէս Մաղաքեանց, ձեռնադրեալ ի Տ. Կիրակոս եպս.է յամին 1837, ամաց իբրեւ ութսունից, դադարեալ ի քահանայագործութենէ վասն ծերութեան:

Գ. Տ. Մատթէոս Փանչուկեան, ձեռնադրեալ ի Տ. Կիրակոս եպս.է յամին 1837: Ամաց 65:

Դ. Տ. Միքայէլ Գալաթանեանց, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպիսկոպոսէ Մաղաքեանց⁹ յամին 1865: Ամաց 40:

⁸ Ստեփանոս եպս. Զաքարեան, Աղաւնի մականունով: Աագանի անունով՝ Զաքարիա: Ծնած է Պուրսա, 1777ին: Ուսանած է Արմաշի վանքին մէջ, ապա եղած է առաջնորդ Պանտրմայի, 1823ին՝ Զմիտնիոյ եւ Սեպտ. 1825ին՝ Արմաշ-Նիկոմիդիա թեմին, ուր ունեցած է շինարար եւ արդիւնաւէտ գործունէութիւն: 1831-39 եւ 1840-41՝ երկու անգամ վարած է Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը, ու այդ օրերուն է որ կատարուած է Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի հիմնարկէքը եւ բազում նոր դպրոցներու եւ եկեղեցիներու կառուցումն ու վերանորոգումը: Պատրիարքութենէն հրաժարելէն ետք, քաշուած է Արմաշ եւ որպէս վանահայր մնացած է անդ մինչեւ վախճանումը՝ 1853: Թաղուած Նիկոմիդիոյ եկեղեցոյ բակին մէջ (*Արմաշու դպրեւանքին 25 ամեայ յորելեանին աղթիւ 1889-1914*, Առետրական նոր տպ. Մ. Յովակիմեանի, Կ. Պոլիս, 1914, էջ 10-17, նաեւ՝ Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, Դ. հատոր, Պետական համալսարանի հրատ., Երեւան, 1942, էջ 678):

⁹ Ստեփաննոս եպս. Մաղաքեանց ծնած է Ատափազար, 1801ին: 1822ին անդամակցած է Արմաշի միաբանութեան: 1829ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ ու զանազան պաշտօններ ստանձնած վանքին մէջ: Հիմնադիրն է վանքի տպարանին (1863) եւ *Յոյս* հանդէսին (1864): 1847-53՝ վարած է Նիկոմիդիոյ ա-

Ե. Տ. Ստեփան Ազարեանց, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան¹⁰ յամին 1869: Ամաց 35:

Զ. Տ. Գրիգոր Աճէմեան, ձեռնադրեալ ի Տէր Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1869: Ամաց 30:

Մէկ վարժարան արական սեռի, որոյ թիւ աշակերտացն է 175, ուսմունքն է քերականութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, թուաբանութիւն, ընթերցանութիւն, գիր եւ եկեղեցական երաժշտութիւն:

Երկու ուսուցիչ որք են.

Ա. Կարապետ Թորոսեան, բնիկ տեղացի եւ ուսեալ անդ, ամաց 58: Շաբաթական վարձքն է 40 դրուշ:

Բ. Շահնազար Աստուածատուրեան, բնիկ տեղացի, ուսեալ ի Սբ. Կուսի վանս յԱրմաշ, ամաց քսան եւ չորից, շաբաթական վարձք 40 դրուշ:

Մէկ դասատու երաժշտութեան Մինաս անուն, բնիկ տեղացի, որոյ տարեկան վարձքն է 1000 դրուշ, եւ առաւօտները մէկ ժամ դաս կ'տայ:

Մէկ նախակրթարան դպրոց որոյ թիւ աշակերտացն է 96:

Մէկ ուսուցիչ նոյն դպրոցին Մինաս Դանիէլեան, բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, շաբաթական վարձք 20 դրուշ, ամաց 56:

Մէկ տնտես երկու վարժարանին Գէորգ անուն, տարեկան վարձքն 750 դրուշ:

Մէկ վարժարան իգական սեռի, որոյ թիւ աշակերտուիւեացն է 186: Ուսմունքն ընթերցանութիւն, գիր եւ թուաբանութիւն:

Երկու ուսուցիչ նոյն վարժարանին.

Ա. Տ. Գրիգոր Քինյ. Աճէմեանց (վերոյիշեալն), բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, շաբաթական վարձք 25 դրուշ:

Բ. Մարիամ Ղառաւոմանեանց օգնական դասատու, բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, ամաց վեշտասեսնից, շաբաթական վարձք 5 դրուշ:

Եկամուտ եկեղեցոյ.

ռաջնորդական փոխանորդի պաշտօնը: 1854ին ընտրուած է Արմաշ-Նիկոմիդիա թեմի առաջնորդական տեղապահ եւ զայն վարած է երկու տարի: 1861ին ընտրուած է պատրիարքական տեղապահ եւ պաշտօնի վրայ մնացած է մինչեւ 15 Հոկտեմբեր 1863: Այս շրջանին է որ կատարուած են Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան աշխատանքները: Պարտիզակի մէջ վարակուած է հնդախտէ ու մահացած 24 Օգոստոս 1865ին (Աբրահամ Յ. Այվազեան, *Շար հայ կենսագրութեանց*, Գ. հատոր, տպագր. Գ. Պաղտատլեան, Կ. Պոլիս, 1893, էջ 7-9, նաեւ՝ *Արմաշու դպրեվանքին...*, էջ 18-19):

¹⁰ Նիկողայոս կամ Նիկողոս արք. Աղասեան ծնած է 1826ին: Կարգուած է Նիկոմիդիոյ վիճակի առաջնորդական տեղապահ, ապա եղած է առաջնորդ մինչեւ 1870. վարած է նաեւ Ակնի առաջնորդութիւնը: 1873ին Կ. Պոլսոյ Խառն ժողովի կողմէ ընտրուած է պատրիարքական տեղապահ: Վախճանած է 11 Փետրուար 1874ին (Արշակ Ա. Ալաօյաճեան, «Ազգային Սահմանադրութիւնը ու իր ծագումը եւ կիրառութիւնը», տես՝ *1910 Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիանդանոցին հայոց*, Կ. Պոլիս, 1910, էջ 445, նաեւ՝ Մ. արք. Օրմանեան, *Ազգապատմութիւն*, Գ. հտոր., Ս. Էջմիածին, 2001, էջ 4966):

Իւղագինէ՝ մոմագինէ եւ բանկալէն գոյացած արդիւնքն եւ սեպհական եկամուտ եղած մէկ հացագործի փոտէն առնուած տարեկան վարձքն	13500 դրուշ
Ծախքն է.	
Երկսեռ վարժարանաց պաշտօնէից տարեկան վարձքը	8350
[Մնացորդ գումար]	5150
Դպրոցի սպառելի ծախսուց համար	0500
[Մնացորդ գումար]	4650
Ժամակոչի տարեկան վարձք	1250
[Մնացորդ գումար]	3400
Եկեղեցւոյ մոմի, իւղի եւ այլ ծախսուց համար	2000
[Մնացորդ գումար]	1400

Սբ. Կարապետի թաղ

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Կարապետի կառուցեալ յամին 1834:

Չորս քահանայ որք են.

1. Տ. Յարութին Տօնաւագեան, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղանի կոչեցելոյ, յամին 1840: Ամաց 60-62:

2. Տ. Պօղոս Տ. Միքայէեան, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղանի կոչեցելոյ յամին 1849: Ամաց 60:

3. Տ. Խորէն Տ. Գրիգորեան, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1866: Ամաց 38:

4. Տ. Յակոբ, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1866: Ամաց 28:

Մէկ վարժարան արական սեռին որոյ թիւ աշակերտաց 140, ուսմունքն է ընթերցանութիւն, գիր, թուաբանութիւն եւ եկեղեցական երաժշտութիւն:

Երկու ուսուցիչ որք են.

1. Ահարօն Վարժապետեան, բնիկ տեղացի, աշակերտ Առաքել վարժապետի Աբրահամեան, ամաց երեսուն եւ եօթից, եւ տարեկան վարձքն է 2600 դրուշ:

2. Մահտեսի Ռուբէն Փափագեան, բնիկ տեղացի, աշակերտ Ազգ. Ուսումնարանի որ յԱտափազար, ամաց իբրեւ քսանից, տարեկան վարձքն է 1820 դրուշ:

Մէկ դասատու երաժշտութեան Մ[ահտեսի] Յակոբ անուն, որոյ տարեկանն է 1000 դրուշ, զոր կ'ընդունի հարսանեաց տուրքերէն եւ սուրբ Ստեփաննոսի յիշատակաց գանձանակէն, եւ առաւօտները մէկ ժամ դաս կու տայ:

Մէկ նախակրթարան դպրոց, որոյ թիւ աշակերտացն 160-170, երկու ուսուցիչ տոյն դպրոցին որք են.

1. Տիրացւոյ Մարտիրոս Պէրպատեան, բնիկ տեղացի, աշակերտ Յովհաննէս վարժապետի Հատիկեանց, տարեկան վարձքն է 1820 դրուշ, տարիքն է 50-52:

2. Պօղոս Համբարձումեան, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 1300, տարիքն է 30:

Մէկ տնտես երկու վարժարանին Խաչատուր անուն, տարեկան վարձքն է 1100 դրուշ:

Մէկ վարժարան իգական սեռին, որոյ թիւ աշակերտուիեացն է 220: Ուսմունքն է քերականութիւն, ընթերցանութիւն, գիր: Երեք ուսուցիչ տոյն վարժարանին որք են.

1. Յակոբ Կոստօլեան, բնիկ տեղացի, աշակերտ Ազգ. ուսումնարանին որ յԱ-տափազար, ամաց 20ից եւ է այցելու դասատու քերականութեան:

2. Նունէ վարժուիի Գօբելեան, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 520 դրուշ, տարիքն է 24-25:

3. Հռիփսիմէ վարժուիի, բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, տարեկան վարձքն է 390 դրուշ:

Եկամուտ եկեղեցւոյ

Իղագինէ, մոմագինէ եւ բանկալէն գոյացած արդիւնք	12500 դրուշ
Մէկ հացագործի փոռէն առնուած տարեկան վարձք	0800 դրուշ
Համագումար	13300 դրուշ
Ծախքն է	
Դպրոցի պաշտօնէից տարեկան վարձքերն	8640 դրուշ
Դպրոցի սպառելի ծախուց համար	0360 դրուշ
Ժամակոչի տարեկան վարձքը	1250 դրուշ
Եկեղեցւոյ մոմի, իւղի եւ այլոց այսպիսեաց համար	2500 դրուշ
	0550 դրուշ

Իգական սեռի վարժարանի տարեկան եկամուտն է 1500 դրուշ, կիրակէ, շաբաթ օրերն եկեղեցին յատուկ թապախով¹¹ գոյացած արդիւնք:

Կիրակի աուրց կանանց յարանէն գոյացած արդիւնք	0500 դրուշ
Բոլոր եկամուտը	2000 դրուշ
Սոյն վարժարանի դասատուաց տարեկան վարձք	1430 դրուշ
	0570 դրուշ
Կիրակէ աուրց քարոզիչ քահանային տարեկան վարձք	0260 դրուշ
	0310 դրուշ
Սպառելի ծախք	0160 դրուշ
	0150 դրուշ

Սոյն թաղիս եկեղեցին ունի նաեւ թահվիլով¹² ստակ 20000, քսան հազար դրուշի չափ:

Աբ. Կարապետ եկեղեցւոյս բակին մէջ 1865էն ի վեր հաստատեալ

Մէկ ուսումնարան չորս թաղին վերաբերեալ, որոյ թիւ աշակերտացն այժմ 13, վասն անխնամ մնալոյն:

Ուսմունքն է

Քերականութիւն, ճարտասանութիւն, կրօնագիտութիւն, թուաբանութիւն եւ հայոց պատմութիւն:

¹¹ Թապախ.- արաբերէն՝ պնակ. հոս նկատի ունի պատարագի ընթացքին դրամահաւաքութեան նպատակով պտըտցուող կամ եկեղեցւոյ դռան մօտ նոյն նպատակով դրուած սկուտեղը:

¹² Թահվիլով.- արաբերէն՝ փոխանցումով (պարտամուրհակով):

Ունի

Մէկ դասատու Հ. Արմենակ Երամեան, բինկ տեղացի, աշակերտ Ժառանգատրաց ուսումնարանի որ յԱրմաշ, ամաց 25, տարեկան վարձքն է 3000 դրուշ:

Մէկ տնտես (որ եւ կառավարիչ) Գէորգ անուն, բնիկ տեղացի, ամաց 30, տարեկան վարձքն է 1200 դրուշ:

Տարեկան եկամուտն է խանէի ¹³ հաշուով արքունի տրոց հետ թաղերը ձգուած	4000 դրուշ
Հարսանեացմէ եւ նշանադրութենէ կ'գոյանայ	1500 դրուշ
[Գումար]	5500 դրուշ
Տարեկան սպառելի ծախքն է	0200 դրուշ
[Մնացորդ գումար]	5300 դրուշ

Սբ. Լուսաւորչի թաղ

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Լուսաւորչի կառուցեալ 1830 Յուլիս 13:

Չորս քահանայ որք են.

Ա. Տ. Մանուէլ, ձեռնադրեալ ի Տ. Պօղոս եպս.է Ղառաղօջեան¹⁴ յամին 1815, ամաց 102:

Բ. Տ. Անդրէաս, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս Աղանի կոչեցելոյ յամին 1829, ամաց 75:

Գ. Տ. Ստեփան, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան 1866, ամաց 35:

Դ. Տ. Պետրոս ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1869 Նոյ., 31 ամաց:

Մէկ վարժարան արական սեռի, որոյ աշակերտաց թիւն է 110:

Ուսմունքն է ընթերցանութիւն, գիր, թուաբանութիւն եւ եկեղեցական երաժշտութիւն:

Երկու ուսուցիչ որք են.

1. Տ. Ստեփան Քինյ., բնիկ տեղացի, աշակերտ նոյն դպրոցի, ամսական վարձքն է 120 դրուշ, այս է դասատու նաեւ երաժշտութեան:

2. Կարապետ Գրիգորեան, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 1300 դրուշ:

¹³ Խանէ.- պարսկերէն՝ տուն:

¹⁴ Պօղոս արք. Ղառաղօջեան, ծնած է Տերէվենք (Կեսարիա), 1751ին: Եղած է առաջնորդ Պուրսայի: 1794ին նորոգած է տեղւոյն հին ու փոքր եկեղեցին եւ հիմնած դպրոց մը: Յուլիս 1810ին կարգուած է առաջնորդ Նիկոմիդիա-Արմաշի, հոսկ 1811ին վարած է առաջնորդութիւնը Պուրսա-Նիկոմիդիա միացեալ թեմին մինչեւ 1820, երբ անցած է Արմաշ, որպէս վանահայր: Եղած է գործունեայ եկեղեցական. կառուցած է եկեղեցիներ, դպրոցներ ու մանաւանդ հետամուտ եղած է Արմաշի վանքի վերաշինութեան ու յաջողած է կառուցել փայտաշէն եկեղեցի մը եւ ուսումնարան մը: Վախճանած է 6 Օգոստ. 1825ին, Արմաշ (Օրմանեան, էջ 4105-7. նաեւ՝ [Յովհաննէս Տէրոյենց Չամուռճեան Պուրսացի], «Պուրսա եւ անոր եպիսկոպոսները», *Երեսկ*, Կ. Պոլիս, 1 Նոյ. 1859, էջ 261-3):

Մէկ վարժարան իգական սեռի, որոյ աշակերտուիւեաց թիւն է 40, ուսմունքն է ընթերցանութիւն, գիր:

Մէկ վարժուիի, Ագապի անուն, բնիկ տեղացի, 40 ամաց, տարեկան վարձքն է 520 դրուշ:

Եկեղեցւոյ եկամուտն է.

Իւղագինէ, մոմագինէ գոյացած եւ մոմարանի արդիւնքն	7500 դրուշ
Երկու դասատուաց տարեկան վարձքը	2800 դրուշ
[Մնացեալ գումար]	4700 դրուշ
Տնտես Ստեփանին (որ ժամկոչ ալ է) տարեկան վարձքը	1300 դրուշ
[Մնացեալ գումար]	3400 դրուշ
Երկու վարժարանաց սպառելի ծախքերն	0500 դրուշ
[Մնացեալ գումար]	2900 դրուշ
Եկեղեցւոյ խոյի, մոմի եւ այլ այսպիսեաց տարեկան ծախք	2500 դրուշ
[Մնացեալ գումար]	0400 դրուշ

Եկեղեցւոյն գանձուն յատուկ թահվիլով ստակ 7000, եօթն հազար դրուշ:

Տեղեկագրութիւնս ստորագրուելէ ետեւ, Ատափազար գիւղաքաղաքիս հասարակութեան կողմանէ քանի մը անձինք յատուկ գերապատիւ սրբազան հօրդ խընդիրք մը մատուցանելով՝ հոս նոյն խնդրոյն իմաստը նշանակել արժան համարեցինք:

Խնդիրն այս իսկ է.

Ատափազարու հայոց արքունի տուրքերու ժողովելու առթիւ՝ շատ անգամ աղքատին պարտուց համար մահալլէներու էիլի սերվէթները¹⁵ իրենց խանութէն կամ գործարանէն զինուորով իջեցունելով՝ կառավարութեան դուռը կ'տանին, գիշերով ցերեկով կ'բանտարկեն, որք իրենց տրոց սեպիական բաժինները տուած եւ պարտք ունեցած չեն ըլլար, այս ապօրինաւոր դրութիւնը որ ի վաղուց ներմուծեալ է՝ քաղաքիս մէջ կ'շարունակուի ի վնաս արիւեստաւոր ազգայնոց:

Աբ. Ստեփաննոսի թաղ

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Ստեփաննոսի կառուցեալ յամին 1810:

Մէկ քահանայ Տ. Յովհաննէս անուն, ձեռնադրեալ ի Տ. Յակոբ եպս.է Ուրֆացւոյ¹⁶ յամին 1859, ամաց 58:

Մէկ վարժարան արական սեռին, որոյ աշակերտաց թիւն է 50, եւ ուսմունքն է ընթերցանութիւն եւ գիր:

¹⁵ Մահալլէներու էիլի սերվէթներ.- արաբերէնով մահալլէ՝ թաղ, էիլի սերվէթներ՝ հարստութեանց տէրեր, մեծահարուստներ, այսինքն՝ մեծահարուստ հայեր, որոնք կառավարութեան կողմէ ձեռքակալուելով կը բանտարկուէին՝ այլոց չվճարած տուրքերուն պատճառով, հակառակ անոր որ իրենք վճարած կ'ըլլային իրենց տուրքերը:

¹⁶ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան: 1861ին ներկայացուած է որպէս Պոլսոյ պատրիարքութեան թեկնածու, բայց չէ ընտրուած (Օրմանեան, էջ 4661):

Երկու ուսուցիչ որք են.

1- Ստեփան Չաքըրեան, բնիկ տեղացի, աշակերտ Կարապետ վարժապետի Թորոսեան, ամաց 36, տարեկան վարձքն է 2080 դրուշ:

2- Սեդրաք անուն, աշակերտ յիշեալ դպրոցին, 16 ամաց, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 520 դրուշ:

Մէկ վարժարան իգական սեռին, որոյ աշակերտաց թիւն է 30, ուսմունքն՝ ընթերցանութիւն եւ գիր:

Մէկ վարժուիի Նոյեմզարա անուն, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 520 դրուշ:

Եկեղեցւոյ տարեկան եկամուտն է	1000 դրուշ
Եկեղեցւոյ տարեկան ծախքն է մոմի իւղի խունկի եալլն	1000 դրուշ
[Մնացորդ գումար]	0000

Եկեղեցւոյ գանձուն սեպիական ստակ 13000 դրուշ:

Այս տասներեք հազար դրուշին տարեկան տոկոսէն եւ երբեմն ալ հանգանակութեամբ կ'վճարուի դպրոցի դասատուաց տարեկան վարձքերն:

Գիւղաքաղաքիս չորս թաղի հայոց արքունի տուրքն է	213954 դրուշ
Պէտէլի ասկերիէն ¹⁷	046975 դրուշ
Բոլոր տրոց գումարը ըստ հին դրութեան	260929 դրուշ
Երկուքէն մնացորդ պարտք	52500 դրուշ

23 Ապրիլ 1871, Ատափազար

Ատափազար գիւղաքաղաքի չորս թաղերու եկեղեցեաց եւ վարժարանաց վրայ վերոյիշեալ տեղեկութիւնները՝ մեք նոյն գիւղաքաղաքի բնակիչքս տուած ըլլալով քահանայք եւ ժողովականքս կ'ըլլատորագրենք:

Անդրէաս Քահանայ Տէր Յոհանէս Քահանայ
 Տէր Պօղոս Քահանայ Տէր Մանուէլ Քահանայ
 Տէր Ստեփան Քահանայ Տէր Աթանասեան
 Տէր Ստեփան Ազարեանց Ն. Ծ. Տէր Միքայէլ Քահանայ
 Յակոբ Քահանայ Խորէն Քահանայ
 Մատթէոս Քահանայ Տէր Յօհաննէս Կիմիւշեան
 Գրիգոր Քահանայ Միտս.ի Սարգիս Գալիկեան
 Յարութիւն Լօխընեան Աստուածատուր Ա. Յ. Մաղաքեանց
 Միտս.ի Մընացական Նազարէթեան Հաճի Թօրոս Սարըեան
 Հաճի Կարապետ Տէվէճիեան Մ. Աբրահամ Ներկարարեան
 Միտս.ի Յովսէփ Պէրպէրեան Մ. Սարգիս Վարդանեան
 Միտս.ի Պաղտասար Յարութիւնեան
 Կարապետ Թիթէրեան Սերօբէ Չախճիեան
 Մ. Յակոբ Շահանեան Յովակիմ Սուքերեան

¹⁷ Պէտէլի ասքերիէ.- արաբերէն՝ զինուորական տուրք, որ կը գանձուէր կայսրութեան ոչ-խալամ արու բնակիչներէն, քանի որ անոնք զերծ կը մնային զինուորական ծառայութենէ:

Պետրոս Պոյեճեան Յովհաննէս Ֆէնէրճեանց
Հաճի Բարսեղ Քէնէճաճեան
Գրագիր ժողովոյն՝ Ահարօն Վարժապետեան

* * *

Թամըխ Գիւղ¹⁸

Ունի

Մէկ եկեղեցի փայտաշէն յանուն սրբոյն Գէորգայ կառուցեալ յամին 1761:

Մէկ քահանայ Տ. Սահակ անուն, ձեռնադրեալ ի Տ. Յակօբ եպս.է Ուրֆացոյ ի թուին 1860: Տարիքն է 34-35:

Մէկ վարժարան արական սեռին:

Եկեղեցին ունի տարեկան եկամուտ 20 քիլէ¹⁹ ցորեն եւ 20 քիլէ միսիր²⁰, որոց աղբիւրն է մէկ աղօրիք մէկ քարէն, զոր նուիրած է եկեղեցոյ՝ Քէօչէկ պապուկ անուն նոյն գիւղէն հայազգի մը 20 տարի յառաջ: Եկեղեցոյ բանկալէն կ[ը]գոյանայ տարեկան 400 դրուշ:

Վարժարանն յատուկ եկամուտ չունի:

Եկեղեցոյ տարեկան ծախքն է 400 դրուշ իւղի, մոմի, խունկի եւ այսպիսեաց համար:

Վարժարանն ունի տարեկան ծախք 600 դրուշ որ է դասատուին վարձքը եւ այն կը տրուի գիւղէն:

Մէկ դասատու Թէլեան Ստեփան անուն, բնիկ տեղացի եւ հոն ուսեալ, ամաց իբրեւ քսանից: Թիւ աշակերտացն է 20-25, ուսմունքն են ընթերցանութիւն, գիր եւ թուաբանութեան չորս գործողութիւնը:

Տէրութեան տուրքն է	10013 դրուշ
Պէտէլիէ	02270 դրուշ
50 խանէի վրայ ²¹	12283 դրուշ

Տրոց պագըլէ²² 2400 դրուշ, որոյ մնալուն պատճառ ժողովրդեան աղքատութիւնն է:

¹⁸ Թամըխ կամ Թամըք.- զուտ հայաբնակ գիւղ Նիկոմիդիա անկախ գաւառի Ա-տափազար գաւառակին մէջ, Ատափազար քաղաքէն հիւսիս-արեւելք եւ Ֆերիզ-լիէն մօտ չորս քլմ. հարաւ-արեւելք:

Ըստ Գասապեանի պատրաստած մարդահամարին, գիւղը 1909-10ին ունեցած է 65 հայ առաքելական տուն՝ 376 անձ, 7 տուն բողոքական՝ 40 անձ եւ 10 շաբաթապահ: Ունեցած է նաեւ Ազգային Տատեան երկսեռ դպրոցը՝ 35 աշակերտ-աշակերտուհիներով (Գասապեան, էջ 243, 260), իսկ ըստ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի 1913ի մարդահամարին՝ Թամըքը ունեցած է 85 հայ առաքելական տուն՝ 382 անձ եւ Ս. Ստեփաննոս քարուկիր եկեղեցին, կառուցուած 1879ին, իսկ 26 Փետր. 1915ի դրութեամբ, գիւղը ունեցած է նաեւ 9 տուն հայ բողոքական՝ 51 անձ (ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 111, թ. 2-3):

¹⁹ Քիլէ.- արմտիքներ կշռելու չափ՝ քոռ, որ հաւասար էր 293.760 քլկմ.ի:

²⁰ Միսիր.- տեղական բարբառով՝ եգիպտացորեն:

²¹ Այսինքն յիշեալ գումարները պիտի վճարուէին իւրաքանչիւր 50 տունի համար:

²² Տրոց պագըլէ.- [նախորդ տարիներու] տուրքերէն մնացորդ:

Ատափազարու գայմազամ²³ Ազիզ պեյի օրով գիղացուցմէ տասն հոգիի սեպ-
հական եղած 300 արտավարի չափ երկիրներն ցանը մէջը եւ քաղելու միջոցին
չէրքէզ գաղթականները գրաւեցին, անոնց թշուառութեան պատճառ ըլլալով:

Գիղիս բնակչաց բոլորին ալ արհեստը երկրագործութիւն է:

Գիղիս եկեղեցին պատրաստ ապրանք գիղացուց վրայ տումարով ունի 400
քիլէ ցորեն եւ 200 քիլէ մսրացորեն, որք 1867-էն ի վեր առանց շահու անգործ
մնացած են:

Մուրհակով ասոր անոր վրայ ստակ 21000 դրուշ, որք նոյնպէս 1867-էն ի վեր
առանց շահու անգործ մնացած են:

Շտեմարանի մէջ պատրաստ 25 քիլէ ցորեն, 25 քիլէ միսիր:

Կալուած

Ունի

Ութն կտոր արտ, ամէնը 25 քիլէ ցորեն առնող որք գիղին բոլորն են, Կեր-
տէմէի մէջ երկու կտոր արտ, ամէնը ութ քիլէ ցորեն առնող:

Մէկ տուն գիղին մէջ, մէկ յարդնոց, երեք արտավար թթենոյ պարտէզ, մէկ
հորթով կով, մէկ ամուլ կով, զոյգ մը եզ եւ 600 դրուշի չափ արժողութեամբ կահ
կարասիներ:

Թէ այս տասն կտոր արտերն եւ թէ տուն, յարդնոց եւ թթենոյ պարտէզը եւ թէ
կովերն ու եզները ու կարասիներն Կէօջէ օղլու հանգուցեալ Մինասէն եկեղեցույ
մնացած են, ինքը իրեն սեպհական ժառանգ չունենալուն համար:

Վերոյիշեալ Կէօջէկ պապուկի եկեղեցույ նուիրած աղօրիքին հետ արտեր ալ
կենալով՝ նոյն արտերը 20 տարի յառաջ 2000 դրուշ ծախելով՝ գինը տոկոսի
տուեր են, այս երկու հազար դրուշն եւ աղօրիքին 20 տարեկան շահն են որ յիշեալ
400 քիլէ ցորեն եւ 200 քիլէ մսրացորենը եւ 21000 դրուշ մուրհակով ստակը կ'ար-
տադրեն:

Այս վերոգրեալ բոլոր ստացուածոց պատասխանատուն են վեց անձինք, որք
են. Կարապետ Պոզեան, Կարապետ Մինասեան, Զատիկ Զէնտիկեան, Թորոս
Կէվրէկեան, Յովհաննէս Զորապճեան, Յարութիւն Վարդէվանեան, որք որոշմամբ
մահտեսի Յարութիւն աղայի Տէյիւմէնճեան եւ Եսայի աղայի մահտեսի Խաչա-
տուրեան միւթէվէլի²⁴ կարգեալ են ի թովին 1870:

Թամըլիս գիղը ունի 50 տուն բնակիչ:

Թամըլիս գիղի վերոյիշեալ տեղեկութիւններն նոյն գիղէն մեք ստորագրեալքս
տուած ըլլալով ամէն մասամբ ստուգութեանը վկայելով կ'ստորագրեմք:

1871, Ապրիլ 20

Կարապետ Պոզեան Մարտիրոս Պոզեան
Ստեփան Զորապճեան Յարութիւն Մանիկեան
Սահակ Քահանայ Զատիկ Զէնտիկեան

* * *

²³ Գայմազամ.- գաւառակի կառավարիչ:

²⁴ Միւթէվէլի.- արաբերէն՝ հոգաբարձու, խնամակալ:

Նոր Գիւղ²⁵

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Կարապետի կառուցեալ յամին 1800:

Մէկ քահանայ Տ. Կարապետ անուն, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Մաղաքեանց յամին 1864: Տարիքն է 43, եւ որուն տարեկան ապրուստ ըլլալու համար բացի քահանայական իրաւունքէն, 30 քիլէ ցորեն եւ 10 քիլէ միսիւր գիւղացւոցմէ վճարել որոշուած է, 20 սայլ ալ փայտ:

Մէկ վարժարան, որոյ թիւ աշակերտացն է 10 արու եւ էգ խառն, ուսմունքն է ընթերցանութիւն:

Մէկ դասատու Արիստակէս անուն, բնիկ տեղացի, Ատափազարու մէջ ուսեալ, ամաց 18, տարեկան վարձքն է 250 դրուշ, եւ այն կ[ը]տրուի գիւղացւոցմէ:

Եկեղեցւոյն տարեկան եկամուտն է 300 դրուշ, գիւղացւոցմէ նուիրուած ցորենէ գոյացեալ:

Տարեկան ծախքն է 300 դրուշ:

Արքունի տուրքն է	2868 դրուշ
Պէտէյի ասքէրիէ	0727 դրուշ, հին դրութեամբ
[Ընդհանուր գումար]	3595 դրուշ
Երկու տրոցմէ պագոյէ	0550 դրուշ

Այս պագայէն մնալուն պատճառն է՝ գիւղին խանէէն տարուէ տարի պակսիլ, եւ այն պակսածին տուրքը դարձեալ գիւղէն պահանջուիլն²⁶:

Գիւղացիքս մեծ զրկողութիւն կրած ենք մեզի դրացի գաղթական չէրքէզներէն, վասնզի մեր գիւղացւոցս սեպիական եւ քօջանով²⁷ հաստատեալ 200 արտավարի չափ արտերն Ատափազարու գայմագամ Ազիզ պէկի օրով գրաւեցին, եւ մեր քանիցս ըրած բողոքը լսելի չեղաւ կառավարութեան, եւ դարձեալ հերուան գիւղաց-

²⁵ Նոր Գիւղ (Թամըքի).- հայաբնակ գիւղ Նիկոմիդիա գաւառի Ատափազար գաւառակին մէջ, Ատափազար քաղաքէն հիւսիս-արեւելք եւ Թամըքէն հարաւ: Ըստ Գասապեանի պատրաստած մարդահամարին, գիւղը 1909-10ին ունեցած է 9 հայ առաքելական տուն՝ 43 անձ (Գասապեան, էջ 243), իսկ ըստ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի 1913ի մարդահամարին, ունեցած է 10 հայ առաքելական տուն՝ 45 անձ եւ մէկ եկեղեցի՝ Ս. Կարապետ, կառուցուած 1786ին (ՀԱԱ, ֆ. 1388, ց.1, գ. 111, թ. 2-3):

Գիւղի Ազգային Եղիայեան վարժարանը 1901ին ունեցած է 15 աշակերտ («Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ», տետր Ա., վիճակ 1901 տարւոյ, պատրաստեալ յիւսումնական խորհրդոյ, Կ. Պոլիս, 1901, տախտակ 3):

Այս գիւղը պէտք չէ շփոթել շրջանին մէջ գոյութիւն ունեցած համանուն երկու այլ գիւղերու հետ՝ Սապանճայի Նոր Գիւղին եւ Մեծ Նոր Գիւղին հետ:

²⁶ Խանէ.- պարսկերէն՝ տուն, ինչպէս տեսանք վերեւ: Հոս խօսքը այն մասին է, որ գիւղի բնակչութեան թիւը տարուէ տարի նուազած է, բայց հակառակ այդ իրողութեան, պետական տուրքը մնացած է անփոփոխ, ինչը պատճառ դարձած է տուրքերու կուտակումին:

²⁷ Քոջան.- թրքերէն՝ կալուածագիր, կալուածի մը սեփականութիւնը հաստատող փաստաթուղթ:

ուցս ցանաձ քսան երեսուն արտավար մարացորենը իւրեանց արջառներուն կեր-
ցուցին, ասոնց նման վնասներ անպակաս կ[ը]կրենք նոցա ձեռքէն, այնպէս որ
գիւղացիքս տեղէ կարօտ մնալով, պարտաւորաձ ենք ուրիշին երկիրը գործելու եւ
ապրելու, այս մասին ողբալի է վիճակնիս:

Գիւղացուցս ընդհանուրին արհեստն ալ երկրագործութիւն է:

Նոր Գիւղ ունի 18 տուն բնակիչ:

Այս վերոյիշեալ տեղեկութիւնները նոյն գիւղէն մեք ստորագրեալքս տուաձ
ըլլալով ըստ ամենայնի ստուգութեանը վկայելով կ[ը]ստորագրեմք:

Մարտիրօս Կիւլէտէրեան Յովհաննէս Չարքաշեան

* * *

Ֆերիզլի Գիւղ²⁸

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սուրբ Աստուաձաձնի, կառուցեալ յամին 1834:

Երկու քահանայ, որք են.

1. Տէր Պօղոս, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննօս եպս.է Աղանի կոչեցելոյ յամին
1836, ամաց 70: Ախտաւոր եւ ոչ ի քահանայագործութենէ դադարեալ:

2. Տ. Մարտիրօս, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննօս եպս.է Աղանի կոչեցելոյ
յամին 1852, տարիքն 50:

Մէկ վարժարան արական սեռին, որոյ թիւ աշակերտացն է 30, ուսմունքն է քե-
րականութիւն, ընթերցանութիւն, գիր, թուաբանութիւն, սրբազան պատմութիւն,
քրիստոնէական վարդապետութիւն:

Ուսուցիչ մէկ Շմաւօն անուն, աշակերտ ժառանգաւորաց ուսումնարանին որ
յԱրմաշ, ամաց 37, տարեկան վարձքն է 1500 դրուշ եւ այն կտրուի գիւղէն:

Եկեղեցույ եկամուտն է երկու խանութ գոյացաձ արդինք	0120 դրուշ
Եկեղեցույ բանկալէն	2000 դրուշ
Գիւղացուց նուիրաձ ցորենէ գոյանայ տարեկան	1000 դրուշ
[Գումար]	3120 դրուշ
Եկեղեցույ տարեկան ծախքն է	2500 դրուշ

²⁸ Ֆերիզլի կամ Ֆիրուզլի.- զուտ հայաբնակ գիւղ Նիկոմիդիա անկախ գաւառի
Ատափազար գաւառակին մէջ, Ատափազարէն երեք ժամ հիւսիս-արեւելք:

Ըստ Գասապեանի պատրաստաձ մարդահամարին, գիւղը 1909-10ին ունեցաձ է
196 տուն հայ առաքելական՝ 872 անձ, իսկ ազգային վարժարանը՝ 80 աշակերտ
եւ 50 աշակերտուի (Գասապեան, էջ 243, 260), իսկ ըստ Նիկոմիդիոյ ազգային
առաջնորդարանի 1913ի մարդահամարին, Ֆերիզլին ունեցաձ է 202 հայ առա-
քելական տուն՝ 908 անձ եւ 1834ին կառուցուաձ Ս. Աստուաձաձին ու 1897ին
կառուցուաձ Ս. Եղիա զոյգ եկեղեցիները (ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 111, թ. 2-3):

1880ին մահմետական գաղթականներ գրաւաձ են ֆերիզլիցի հայերու 2000 ար-
տավար հողատարաձք. իսկ 1894ին Լեմոն Տէրէյի թուրքերը գրաւաձ են հայերու
1000 տէձնիւմ բերրի հողերը, եւ առ այդ, կառավարութեան մօտ եղաձ դիմում-
ները ամբողջ 30 տարի մնացաձ են անհետեւանք (Անահիտ Աստոյեան, «Իզմի-
թի (Նիկոմիդիա) գաւառի հայ բնակչութիւնը եւ նրա սոցիալ-տնտեսական վիճա-
կը XIX դարավերջին եւ XX դարասկզբին»՝ Հայոց ցեղասպանութեան մշակութա-
յին եւ նիւթական հետեւանքների յաղթահարման մեթոդաբանութիւնն ու գործի-
քակազմը, ՀՀԳԱԱ, պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2021, էջ 229):

[Մնացեալ գումար]	0620 դրուշ
------------------	------------

Թահվիլով տրուած ստակ՝ 500 դրուշ:

Արքունի տուրքն է	29247 դրուշ
Պէտէլի ասկէրիէ	06586 դրուշ
[Ընդհանուր գումար]	35833 դրուշ
Թախսիլթարի ²⁹ համար	2000 մաքուր ստակ ³⁰
Միլլէթ քէահեայի ³¹	0500 մաքուր ստակ
[Ընդհանուր գումար]	38333 դրուշ

Վէրկիէ³² եւ պէտէլիէ մնացորդ 1700 դրուշ:

Պագայէն³³ մնալուն պատճառ ժողովրդեան աղքատութիւնն է:

Ֆէրիզլի գիւղիս մէջ կայ 150 տուն բնակիչ:

Գիւղացուցս երկիրներուն մէկ մասը Ղառասուի դագէն³⁴ ըլլալով քանի մը տարիէ ի վեր նոյն երկիրներու յատուկ ճամբայն Սինան Օղլու կոչեցեալ գիւղի տաճիկ բնակիչները գրաւելով՝ նոյն տեղերը չեմք կրնար մշակել, եւ եթէ մշակելու ըլլամք, մեր ճամբայն գրաւողներուն հետ կռուիլ պէտք է, այս մասին մեր աղքատը խիստ կը նեղուի, վասնզի գիւղացուցս արհեստը երկրագործութիւնն է:

Վերոյիշեալ տեղեկութիւնները նոյն գիւղէն մենք ստորագրեալքս տուած ըլլալով՝ վասն ամենայնի ստուգութեանը վկայելով կ'ստորագրեմք:

Տէր Մարտիրոս Սէրգիս Կոմիքեան

Հաճի Հարապետ Փիլիպոսեան Խաչատուր Մուրատեան

Ստեփան Ուզունեան

²⁹ Թախսիլթար.- հաւաքող, գանձող, հարկահաւաք:

³⁰ Մաքուր ստակ՝ նկատի ունի օսմանեան «սաղ»՝ իսկական, չխարդախուած դրուշը, մինչդեռ խարդախուածը կը կոչուէր «չուրուք» դրուշ՝ արուած դրուշ, որ իսկականին մօտ մէկ-չորրորդ արժէքը ունէր: «Չուրուք»ը յառաջ եկաւ, երբ տնտեսական ճգնաժամի հետեւանքով կառավարութիւնը դրուշի պատրաստութեան ժամանակ արծաթին խառնեց այլ մետաղներ:

³¹ Միլլէթ քէահեա.- թրքերէն՝ ազգի [հայութեան] գործակատար, ազգային գործերու հետամուտ անձնատրութիւն:

³² Վէրկէ կամ վէրք.- թրքերէն՝ ուղղակի տուրք, հարկ:

³³ Պագայէ.- արաբերէն պագայա՝ մնացորդ:

³⁴ Ղագէ կամ ղազա, ղատա.- արաբերէն՝ գաւառակ:

AN UNPUBLISHED STATISTICAL REPORT OF 1871 ON ADAPAZAR AND ITS THREE ADJACENT ARMENIAN-INHABITED VILLAGES

(Summary)

MIHRAN MINASIAN (mihran.min@gmail.com)

The first part of this unpublished statistical report of 1871 on the Armenian-populated town of Adapazar and its three adjacent Armenian-populated villages focuses on the Armenian-populated four quarters of Adapazar and provides details about their churches, their priests, their male and female schools and teachers, the number of Armenians according to their denominations, and the financial conditions of the churches and schools. In its second part the report provides similar details about the three Armenian-populated villages, namely Tamlekh, Nor Kugh and Ferizli, which were adjacent to Adapazar. Furthermore, the second part of the report highlights the difficulties of the Armenian villagers, the dire economic situation they were living in, the usurpation by the state of land owned by the villagers without any compensation for the benefit of the incoming Cherkez refugees and neighboring Turks.

The report bears further importance due to the fact that the book, which is dedicated to Adapazar, barely includes any information on the said areas during the 1870s.